

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Պուշկարիոյ համար
Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 »
Արտասահմանի հա-
մար տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »
ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐՆԵԼԻ
—)(—
Գրութիւնք եւ չեմ տրուիր
—)(—
Մանուցում տողը 20 սան-
քիւմ է. երեքիւն աւելի սան-
քանեւոր համար 20 Օլո
գնող կրնայ:

ՇԱՐՋՈՒՄ

Նախկէ եւ որսւմ որկեղ
Խմբագրութեան հասցիին.

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.
Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie).

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵԲՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Գիւն 10 ՍԱՆԹԻՄ

Գիւն 10 ՍԱՆԹԻՄ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ.
Адвокатъ

ՍԽԱԼ ԽՈՐԱԳԻՐ ՍԸ

—)(—

«Նոր Կեանք»-ի 11 թիւին մէջ արգահատանքով կարգացրինք Պ. Արփիարեանի «Ինչու՞ Վասպուրականը» խորագրով յօդուածը, որուն մէջ գիւսանագիտական հրատարակութիւններէ քաղուած կարգ մը վկայութիւններով և քանի մը ճապաղ փաստերով կը վճռէ յեղափոխական գործունէութեան փաստակարարութիւնը Վասպուրականի մէջ:

Յիշատի այդ յօդուածը ամենազօրեղ կերպով կապացուցանէ թէ՛ կուսակցամտութիւն և զձեռն վրէժխնդրութեան կիրքը մինչեւ որ աստիճան կարող են ստորնացնել հրապարակագիր մը ու խաթարել նոյն իսկ իր կարողութիւնները: Հնչ. վերակազմեալ վարչութեան խմբագրապետը որ գիւսանագէտ պատմագիր հովեր առած «Ժամանակակից պատմութեան էջեր» կը շարագրէ ու յեղափոխական դէպքերը կը քննադատէ՝ այս յօդուածով բացարձակապէս կը հաստատէ որ ոչ թէ յեղափոխութեան այլ մինչեւ իսկ այդ մեծ շարժման հանդիսավայր երկրին և հոն ընթացիկ հանգամանքներուն ամենատարրական ծանօթութեան իսկ զուրկ է:

Ամենագէտ հայն անգամ գիտէ թէ՛ Վասպուրականը իր ընդարձակ հայրենիքի սիրտն է, որ դարերէ ի վեր անդադար կը բարբախէ ընդհանուր հայութիւնը յուզող դէպքերու շնչով, որ հայութեան նախապատմական յիշատակարաններն իսկ դեռ կը պահպանէ իր ծոցին մէջ և իր բնիկ հին զրոյցներու ու բարքերու աւանդապահ ժողովուրդի մեծամասնութեամբ ամէնէն աւելի անաղարտ պահած է հայկական սեփականութեան գրոշմը:

Այսօր իսկ սպանդուխտ կամ տարագիր հայը՝ «Հայաստան» անունը լսելուն նախ ինքնաբերաբար կը պատկերանան իր

կարօ՛ւակէղ աչքերուն առջեւ աննման վանը իր ցանկալի այդ գեասաններով և զուտ հայ անուններ կրող գիւղերէ շրջափակուած ծովակը, որու ափին մղուեցաւ առաջին անհատար կռիւը նորակազմ հայութեան սպաննացող բռնակալին դէմ:

Սարկութեան երկարատեւ թմրութեանն յետոյ դարձեալ այդ բարձունքէն շնչեց հայութիւնը սթափեցնող շունչը, հոն՝ Տոսպի վաղեմի սպառաժներէն հնչեցուց նորափետուր արծիւն իր սպառար ձայնը: Մինչդեռ Պոլսոյ խորդ գաստիարակութիւնը շաղկերտներ կարտագրէր, հոն գրուեցաւ խղճուկ արեղայի մը ձեռքով առաջին քարը տոհմային կրթութեան անդրանիկ շէնքին, որկէ ելան բաղմատան ժողովրդին իրապէս կարեկից գործիչներ: Վանն էր որ առաջին անգամ լոյս աշխարհին հասցուց դաւաճներու մութին մէջ բարբարոս մահմեականի գործած անլուր ոճիրներուն բօթը. պատրիարքարանի գիւսանը վկայ է այս ճշմարտութեան: Եւ մինչ ուրիշ դաւաճներ կը մրափէին՝ Վանէն լուսեցան սպառաժական պատրաստութեանց շշուկներ: Վասպուրականը ծնաւ յեղափոխութեան նախավիճակները: Եւ դեռ Արփիար կը սարակուսի թէ «Երկրին տառապանքներուն անխուսափելի հետեւանքը չէ յեղափոխութիւնը»:

Պ. Արփիար մասնացոյց ընելով թուրք կառավարութեան, քիւրտ ցեղերու և տաճիկներու դաշնակցական ընդգրկութիւնը, յիմարութիւն կը համարէ յեղափոխութիւնը Վասպուրականի մէջ և անկարելի այդ նահանգին համար ինքնօրէն վարչութիւն մը: Ընդունեցինք այդ պատգամը. բայց թո՛ղ ցուցնէ մեզ նահանգ մը, գաւառ մը, տեղ մը վերջապէս, որ այս դաշնակցութիւնը գոյութիւն չունենայ: Յեղափոխական գրոշը պարզելու օրն իսկ չմտածեցինք որ կառավարութիւնը, մահմեական ցեղերը կամ թիւրք ժողովուրդը ձեռքեր-

նին ծալլած չպիտի նստէին մեր շարժումներուն հանդէպ, քանի որ երեքն ալ հաւասարապէս մեր ոխերիմ թշնամիներն են: Բայց այդ առարկութիւնը գոնէ Վասպուրականի համար մեղմանալու պատճառ ունէր, քանի որ հոն հայ ազգաբնակչութիւնը համեմատաբար մեծամասնութիւն ու համախըմբում մը ներկայացնէ գլխաւոր վայրերու մէջ և մերձաւոր պարսկական սահմանը կրնայ պահով սպաստանարան մը ըլլալ վտանգուած գործիչներու, փախըտալաններու ու յարմար կեդրոն մը յեղափոխական անհրաժեշտ պատրաստութեանց: Հապախե՛նք ըսել ներքին դաւաճներու գրութեան, ուր՝ Տիգրանակերտէն մինչեւ Կիլիկիա հայ հասարակութիւնը ամենուրեք սեղմուած թուրքերու, քիւրտերու, չերքէզներու, չէչէններու, աւշարներու, լաղերու և այլ անհամար խուժանին մէջ՝ ամենափոքր խրտումին բնակչին ըլլալու վտանգին ենթակայ է, առանց փախուստի կամ սպաստանի յոյս մը իսկ ունենալու:

Ատոնք այնպիսի ակներեւ իրողութիւններ են, որ հաստատուելու համար Պ. Արփիարի անճարակ փաստերուն պէտք չունին. ակնարկ մը վերջին աղէտներուն բաւական է լիովին համոզուելու: Զարմանալի է որ Պ. Արփիար այդ դէպքերուն ալ բոլորովին անտեղեակ կերեւի պնդելով թէ 1895ին Վանի ժողովուրդին խոհմութեան շնորհիւ յետաճուեցաւ կոտորածը: Միթէ նուա՞ղ խոհմի գտնուեցան Աւրֆա, Տիգրանակերտ, որոնք ջարդին ունէ պատճառ չտալէ զատ՝ իրենց անձնապաշտպանութեան ղէնքերը իսկ նախապէս յանձնեցին կառավարութեան: և սակայն չազատեցան եկեղեցիի կամ շուկաներու մէջ բերելով խողխողութիւն: Այդ յապաղման պատճառը դարձեալ յեղափոխական գործունէութիւնն էր, որ յաջողած էր Վանի մէջ կոկիկ ուժ մը կազմել, և կառավարութիւնը ձախող քայլ մը չառնելու համար, կանխաւ մեծ պատրաստութիւն-

ներ տեսաւ և ապա միայն համարձակեցաւ կոտորածի նշանը տալ: Եւ իրօք մինչ այլ տեղեր ժողովուրդը ոչխարի պէս մորթուեցաւ, Վասպուրականն էր դարձեալ որ դիւցազնական ընդգրկմութիւն մը ցուցուց ու թէեւ տեղական կառավարութեան հիւպատոսներու միջոցով ի գործ դրած խարդախութեան շնորհիւ հազարաւորներ զոհ տուաւ, բայց գէթ հարիւրաւորներու ալ դիակը փռեց: Եւ Պ. Արփիար կը գոռայ դեռ «Գործունէութեան ինչու՞ վայր ընտրեցին նահանգ մը, որ իր գիրքովը բոլորովին անյարմար էր ունէ նպատակի ծառայելու»:

ԿԱՐԻՃ

(Մնացեալը յաջորդող)

ՕՐԸ ՕՐԻՆ

ՀԱՅ ՍՊԱՆԵՐ

—)(—

Այս տարի, Սօֆիայի գինուորական բարձրագոյն վարժարանէն ելած են ութսունէն աւելի աւարտականներ. ասոնց մէջ երկուքը հայ են, երկուքն ալ Վասնացի. մէկը պաշտօնով պիտի մնայ այստեղ իր քաղաքը և միւսն ալ՝ Սիւրիտէ:

Ան որ յօդուածիս բուն շարժառիթն է, նախորդ շարժու հասաւ Վանա, եւ, հազիւ թէ երկու օր անցած, գինուորական գունդի մը գլուխն էր: Քսան երեք տարեկան է հիմա, միջին հասակով, լայն թիկունքով ու լայն լիւրճով: Աւելի թխամորթ է քան թէ սպիտակ, ճակատին վրայ կողմակի ցլուածքներ որոնք յամառ կամք մը ու չընկրկող վճռականութիւն մը ի յայտ կը բերեն: Եւ ի՛նչ ակտիվ է տեսնել, կեանքի այդքան թարմութեան մէջ, երիտասարդ սպայ մը իր երիտասարդ զօրագունդին գլուխը. կրակն է ան վառօղին քով, մէկը բռնկեցնող, միւսը բռնկելու այնքան ընդունակ:

Հայ սպայ մը, ո՛ր որ ալ ըլլայ, ո՛ր աստիճանի ու երկրիս ո՛ր կէտին վրայ իսկ գտնուի, չի կրնար ուրանալ թէ իր փայլին ու փառքին մէջ, իր գափնիներու կանանչ սերունդներուն վրայ բաներ կան՝ որոնք իր մոռցուած հայրենիքին են: Տուկուսութիւն, ճակատի ցցուածք, որ ասիւծի գիծ մըն է ընդհանրապէս

հայ ազգայիններու զէմքին վրայ, կամքի աննկուն յամառութիւնն եւ ուրիշ ձիւրքեր, Ժամանակակիցութեան օրէնքով, ազգէն խառնուած են իր ամբողջ էութեանը մէջ: Եւ փոխադարձ իր ցեղին մատուցուած պատիւ մըն է երբ հայ զաւակ մը, իր ուսանողի շրջանին մէջ, համակրանքով շրջապատուած, քրտինքով կը քաղէ զաինի ի կանաչ տերեւներ:

Այսպէս ըրած է մեր նորընծայ սպան, Աւետիս Արեւեան. վառնա դարձած օրը՝ պարկեշտ երիտասարդի մը, պարտաճանաչ ուսանողի մը, յամառ ու անվնաս աշխատողի մը անո՛ւն յիշատակը թողած է իր վարժարանին մէջ, եւ այդ առաւելութիւններն են՝ որոնք, իր ոսկեմուտի ուսնոցներէն աւելի, իր փայլն ու փառքը կը շինեն: Ուսումնէն աւելի ուսանողներու մէջ, որոնք ամենքն ալ պաշտօնի զրկուած են, Արեւեանը հինգերորդն է: Այդ պատիւն է՝ որու ծախ կը զարնենք հրճուանքով:

Սակայն՝ վե՛ր, աւելի վեր: Հայ սպաններու պարտականութիւնը ծանր է: Հիները մէկզի ձգելով, եթէ Դաւիթ-Պէկէն ու Սահիանս Շահումեանէն ասդին նայինք, Կովկասի ապստամբներուն մէջ կը տեսնենք հայ զինուորականի առեւծային զէմքեր: Մատթեան, Արզուման, Արզուման, Բեհրուժեան, Լորիս Մելիքով, Լազարէֆ, Տէր-Ղուկասօֆ եւ ուրիշներ՝ որոնք անցան գացին եւ անոնք՝ որ այսօր կ'ապրին:

Ասոնք ո՛ր միայն օրինակելի արիւարներ են վեց երիտասարդ սպաններուն, այլ սոսկալի քննադատներ իրենց ետեւէն քաղող հայ զինուորականներուն: Արզուման, իր կրանիդէ արձանին վրայ, Բեհրուժեան, Լազարէֆ, Տէր Ղուկասօֆ, ասոնք ո՛ր եւ է միջակութեան երեք շին հանգուրծեր, իսկ Լորիս Մելիքով, որ, Ազիզաւանուր Բ. ի օրով, զիկատասոր մը եղաւ Սիւլայի չափ զարնուրելի եւ որ իր սիրելի կայսեր մահուանէ ետքն ալ՝ ամբողջ երեք օր իր ձեռքին մէջ ունեցաւ ռուսական կայսրութիւնը իր 130 միլիոններովը: մէկ հեղինակով կը սպանէ փոքրօրի զինուորականութիւնները: Ասդին Ասատուրօֆն ալ կայ, ռուսական հե-

ծելազօրքի բաժնատիրճան հրամանատար մը որ Ռուսիոյ մէջ, սաղմափորձի մը ատեն, ախոյան կեցած էր գերմանիոյ արդի կայսեր, եւ վերջէլ մը, իր կայսերական վեհափառութեամբն ու զերման մտքի բոլոր հնարքներովը՝ Ասատուրօֆի զիրկն ինկաւ. առեւծին ճանկերը, թաւելի փափկութեամբ, զրուեցան կայսեր լանջքին վրայ, եւ վերջէլ մը երկաթի ճնշում զպայ հայ զօրավարի աճառու քաղուկներուն մէջ:

Վե՛ր, միշտ աւելի վեր: Հայ զօրավարներու ճամբէն քալեցէք, սիրելի սպաններ, պուլիարական հողին վրայ զգացուցէք թէ ձեր երակներու մէջ շրջան կ'ընէ այդ մեծափառ սաղմափորներուն արիւնը: Անոնց յիշատակովը խրատոյս եւ օրինակ կ'ընէ անոնց որ ձեր ետեւէն՝ ձեր ճամբան պիտի քարեն: Այսօր Պուլիարականին էք՝ վաղը մեզի կ'ըլլաք, ձեր հայրերի քիւրքը կ'ըլլաք:

ՇԱՒԱՍՊ

ԴԵՍԻՆԻՆԻ ՏԵՂԵՎՈՒՆՆԵՐ

—)(—

Հայր Շարիթանի այս հանգէսին մայրս—յունիտի թիւն հրատարակուած է, եւ զլիսուորակց կողմէն սովատանջ Հայաստանի վիճակով:

Բացուած հանգանակութեան զուամարն հասեր է 700,000 ֆրանքի: Երուն մեծ մասը յատկացուած է թէ՛ սովահարներու անմիջական պէտքերուն եւ թէ՛ առաջիկայ հունձքին յաջողութեանը համար հրապարակուած գործիւնը ու կ'ընկու հայ թաղի ման: Բայց եւ այնպէս, հակառակ այս փութկոտ նպատակներուն, թշուառութիւնը կը շարունակէ իր նախճիրները:

Բազմաթիւ գեղերու մէջ, նոյն իսկ վանի զոնները, տարաբար բնակիչներ անօթութենէ կը մեռնին: Միւնակ Գարակունտուզի մէջ այս զրգարաւտ վախճանը ունեցող հայերուն թիւը կը հասնի երեսունի: Շատ գեղեր իրենց յետին պաշարներն սպառած լինուցած են: Խեղճերը զրեթէ զաւերու խոտերով միայն կ'երկարեն իրենց կեանքը: նոյն

իսկ անոնք որ նպաստ կ'ընդունին, անողք զրկանքներու կը դատապարտեն ինքզինքնին եւ կը համակերպին խառով անանիլ, որպէս զի զարնան վարուցանին կարնան զործածել իրենց հասցուած ամբողջ նպատակը:

Վանի տոմարիկան միտնարութեան մեծատար եւ հիւպատոսական գործակալ Պ. աբ Ֆրանս կարգ մը նամակներ ունի հրատարակած որոնք մանրամասն ու սրտաճմրկ կերպով կը նկարագրեն: Պ. աբ Ֆրանս 5908 աղքատներու բաժներ է 22,000 ֆրանք, որով միջին հաշուով 4 ֆր. էն քիչ մը աւելի ինկեր է իւրաքանչիւր մարդու:

Ապրիլ 11 թուակիր նամակին մէջ, 27,000 ֆրանք նպատակ առաքման առթիւ կ'ըսէ. «Ինչպիսի բնութեանցէք ջերմ շնորհակալութեամբ այն հողածութեան ու համակրանքին համար զոր այնքան ազնուօրէն ցոյց կուտաք ի նպատակ տարաբար ազգի մը որ, լքուած իր կառավարութեանն, միայն եւրոպայի ու Ամերիկայի քրտոստնեաներու սղորմութիւններովը կ'ապրի: Հաւատեցէք նորիառութեանը որ իրենց սղորմութիւնները ամբողջ գեղեր մահուանէ կազատեն եւ յոյժ ազգուօրէն կը նպատակեն վանի նամակին հայ ու նիստորական ժողովուրդներուն փրկութեանը, որոնք անխուստփելի կերպով պիտի զատապարտուէին քաղցի, ցրումի, անկայման մարտիրոսութեան, առանց ձեր թանկագին աջակցութեանը»:

Մայիս 4 թուակիր նամակի մը մէջ հայր աբ Ֆրանս ներքին նպատակ ինչքէ, որովհետեւ նորիս, նախիկ, կարաքանձ, Սիրիկէ, Աւերակ, Շուշան, Կարճկան, Տիւրքիսի կողմէն զարգացող զեղերու մահուանը մասին շարունակուած են:

Մայիս 18 թուակիր նամակը միւսները կը զերգանցէ իր աղիւստով պարտեակութեամբը. անօթութիւն ամենուրեք, ուղ, մահ: Հայր աբ Ֆրանս օգնութիւն կ'աղաղակէ. Կարճկանի յիտուն գեղերը ոչ հաց, ոչ ցորեն, ոչ զարի ունին: Սովատանջ գեղերուն շարքն անվերջ անհասնում է: Արկուած նպատակները որքան ալ կարեւոր ըլլան, ահլըն-

թարթի մէջ կը հալին կը լինան արեւոյ թշուառութեան ովկէանին մէջ:

Հայր աբ Ֆրանս բոլոր յոյժը դրած է աս գարնան հունձքին վրայ. ու եթէ աս յոյժն ալ ապարդիւն ելլա՛յ... մատուցին իսկ անեղի է:

Իր յուզիչ նամակներու շարքին մէջ, միտնարական մեծա որը ունի հատ մը վանայ Այգեստանին վրայ գրած, որուն շահեկանութիւնը կատարէ մեզ թարգմանարար ներկայացնել զայն մեր ընթերցողներուն յաջորդ թուով:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Նիւ-Եորք, 10 Յունիս

Քուպան... անկախ ու ազատ չէ զիս...: Երկի Քուպան յեղափոխութեան մէջ էր, այսօր թէ՛ յեղափոխութեան եւ թէ՛ պատերազմի արհաւիրքներուն մէջն է, իսկ վաղը... կ'ազատի...:

Այսպէս եղած է բոնութեան ձերաններէն ազատուող ազգերուն ճակատակրը: Այսպէս եւ պիտի ըլլայ Քուպային ալ:

Մատուցարկու երկու ամիս կ'ըլլայ որ «Պոսերու, սալարապաշաներու, ստիակ կանքիներու եւ շահու համար կոռուպցիոն այս ազգը»—աներես, անպատկառ եւրոպան փակցուց այս մակդիրները ամերիկեան ազգին վրայ՝ որպէս զի իր սեւցած երեսը ձերմկնէ—Քուպայի ազատութեան համար անեղի պատերազմը հրատարակած է Ապաշիոյ զէմ, քայլ առ կային Քուպան ազատուած չէ: Ամերիկեան մամուլի մէկ մասը եւ հասարակութիւնը, Քուպայի ազատութեան անհանգիստ արեւցած, կը յայտարարէին թէ պատերազմը հաղիւ մէկ շարքով պիտի տեսէ: Կը բաւէր որ Լնքը Սամի նաւատորմը պղտիկ ցոյց մը ընէր Հուանայի առջեւ եւ երկու ուղիք նետէր անոր բերդերուն վրայ, սնանացած, ու ժասպառ Սպանիացին իսկոյն տեղի պիտի տար ու Քուպայի միտաղեայ ու Ամերիկայի բազմաստղեայ զրո-

ՎԱՐԴՊԱՏՐԻԿՈՎԻ ԳԵՇԱՍԿԱՍԱՆԸ (20)

Յուլիան Պոլսից եկաւ Նշանը եւ ինձ առաջարկեց զնալ Պոլսի իբր Հնչակեան լիազօր ներկայացուցիչ: Նա յայտնեց որ բոլոր ուժերը ցրված են եւ կ'ապրը կ'արված Գուժ-Գափուրի ցոյցից յետոյ, որը կ'ընէր մի շտապողական գործ միայն կարնի գործերին արձագանք սալու համար. հարկաւոր էր կ'ապրը ամբողջել, ցրուած ուժերը ժողովել, նորերին զտնել եւ պաշտօնապէս Հնչակեան կուսակցութեան կողմից յեղափոխական գործնական քայլեր առնել:

Նա ինձ խորհուրդ չը տուց մասնակցել հրոսակային խմբի արշաւանքին, որ եւ կ'արող էր ոչնչանալ առանց մի օգուտ բերելու, քանի որ ոչ մի կերպ պատրաստ չէի այդպիսի մի գործի համար:

Այդ առաջարկութիւնը ինձ շատ ուրախացրեց. սակայն եւ մեծ մտաւանջութեան մէջ զցեց. կասկածում էի որ կ'արողանամ այդպիսի մի ծանր պաշտօն կատարել, մանաւանդ Պուլսում գործ էի ունենալու այնպիսի հայ ինտելիգենտ մարդկանց հետ, որոնք կովկասում մեծ հռչակ ունէին,

ուրեմն եւ բաւական հաստատուն ու ազգեցիկ զրք Պուլսի երիտասարդութեան մէջ: Սակայն ուրիշը չը կար եւ ես որոշեցի անյայտ ճանապարհ ընկնել հաստատ որոշումով հայ յեղափոխականի պատվը եւ զրոշակը բարձր մտքուր պահել՝ նոյն իսկ ամենաճանր պայմաններում:

Շուտով գնացի ուսումնարանի տեւի մօտ, ինչորեցի երբ հաստատված վկայական ստանալ իր մօտ պահէ, մինչեւ ես հասցէ կուղարկեմ. տեսուչը զարմացաւ, որովհետեւ նա զիտէր որ ես միտք լնէի այդ տարի Բաթումում հայոց երկսեռ դպրոցներում պաշտօն ստանալ:

Նա հասկացաւ թէ ես ո՞ւր եմ գընում, որովհետեւ իմ ձգտումները հետ լաւ ծանօթ էր եւ առաջարկեց համբուրել: հենց այդ օրը ճանապարհ ընկայ զէպի Պոլսի, օգոստոսի սկիզբներին:

Ճանապարհին հանդիպեցի Տրապիզոն, մասամբ այդ տեղի գործակից ընկերների հետ տեսակցելու, մասամբ էլ մի ձեռք զգեստ դնելու: Այստեղ աւերող չեմ համարում յիշել որ վանիցի մի յեղափոխական գերձակ օրը ինձ ճանաչում էր իբր «ազգասէլ» երիտասարդի եւ հասկա-

նում էր թէ ես ինչ նպատակով եմ ճանապարհորդում, մի ձեռք զգեստ ստաւ փախու եւ նրա հետ միասին կ'արեւու համար տուածս սաս բուրլին: Նա խոստացել էր զնալու օրը կոտորուք բերել, եւ իմ մտքովն անգամ չէր կարող անցնել որ մի երկուստասարդ, ըստ երեւոյթի հայրենասէր արհեստաւոր, կ'արող էր այդպիսի մի խաղ խաղալ իմ գլխին: Այդ պատճառով էլ ես բոլորովին հանգիստ էի: Սակայն նա իր զուրս գալիս հաղիւ մի ժամ էր մնացել, երբ սկսեցի կասկածել պարտնի ուշանալու վրա եւ գնացի նրա խանութը: Նրա ընկեր հրեան ինձ յայտնեց որ երկու օր առաջ վանեցի կ'արեւը բաժանվել էր իրանից եւ ճանապարհ ընկել զէպի հայրենիք: Այդ ցած ու անսպասելի վարմունքը ինձ շարացրեց, մի քանի վայրկեան քարացած մտքի փախստական գերձակի խանութում եւ շտապելով տուն վերադարձայ պայուսակ վերցնելու որ նախից ետ չ'մնամ:

Ընկերոջս մայրը երբ այդ խոսցաւ, նախ չափազանց յուզվեց, ապա սկսեց ինձ խորհուրդ տալ հրաժարվել այնպիսի մի ճամբորդութիւնից, որը հենց առաջին վայրկեանով ճա-

խորդութիւնով սկսվեց:

Տրապիզոն հանդիպեցի Պ. Պ. Պետրոս Մարիմեանին եւ Հմայակ Խուշփուլեանին. մեր տեսակցութիւնը այնքան կարճատեւ էր եւ խօսակցութիւնները աչքաքան սահմանափակ որ մի որոշ զաղափար չը կ'աղմեցի ինձ առաջին անգամ հանդիպած տաճկահայ յեղափոխական ինտելիգենտ երկուստասարդների վրա: Միայն Մարիմեանը աւելի լուրջ, հաստատուն կամքի տէր եւ զարգացած մարդու ապաւորութիւն թողեց քան Խուշփուլեանը:

Տրապիզոնում ինձ առաջարկեցին մտնել Սամսուն, այնտեղի մեր ընկերները եւ մի ուրիշ պարոնի մէջ տեղի ունեցած թիւրիմացութիւնները պարզելու համար: Սամսունում հանդիպեցի մի քանի լաւ երիտասարդների, որոնք շատ ոգեւորված էին յեղափոխական գործով եւ անսպասելի զորհրդութիւնների պատրաստ:

ՎԵՐՋ Ա. ՄԱՍԻ

(Շարունակելի)

—)(—

չակները պիտի ծածանէին Գուպայի վրայ : Ժողովուրդը եւ մամուլը այսօր կը սեռնեն թէ շատ ալ հեշտ գործ չէ ազգ մը ջանքերը եւ ուրիշ ազգի մըն ալ ազատութիւն չընորհելը : Բայց մազի չափ յուսահատած չեն անոնք : Սպանիան յաղթելու համար արեւն թափել հարկ է եւ ազգ մըն ալ ազատելու համար մեծ զոհողութիւններ պէտք են . այս երկուքն ալ ըրին ու պիտի ընեն Ամերիկացիք : Ո՛չ Մանիլայի կտուր միջոցին եւ ո՛չ ալ Մանիլայի փորթի միջոցին եւ Սանթիագոյի ուրաւ կոծութիւններու ժամանակ անոնք նահանջեցին սպանիական կրակներէն , բայց երբ գոտթիւն գնտակները չեն դպիր Եանքիներուն , ան ալ իրենց յանցանքը չէ : Հարիւրաւոր սպանիական զօրքեր ինկան . բայց մինչեւ հիմակ հազիւ 10-12 սակերիկեան զինուորներ մնան , իսկ «տօլարապաշտները» միլիոններով այրեցին , ծախսեցին ու պիտի ծախսեն այն սիրուն կանանց թուղթերէն զորս կը պաշտէին :

Ամերիկեան խաղաղականի նաւատորմը Մանիլայի առջեւ , ծովակալ Տուրի հրամանատարութեամբ , տարած փառաւոր յաղթութիւնէն ի վեր , Միացեալ Նահանգներու օրուան զիւցազնը , աւելորդ է ըսել , ծովակալ Տուրին է : Յուզուած , հրեծուած ժողովուրդին բերանն է անոր անունը , անոր պատկերը ամէն տեղ է , նոյն իսկ փողկապներու վրայ . . . Ամրոխը հազիւ թէ անմահներու շարքին մէջ անցուց Մանիլայի հերոսի անունը , ահա այս օրեր ուրիշ զիւցազնի մըն ալ անունը կուգայ անմահանալու . այն է նաւաչէն Հըպօսընի անունը : Նաւապետ եւ միանգամայն նաւային ճարտարագետ Հըպօսընի ծովային պատերազմներու մէջ ամենէն յանգուզն եւ վտանգալից գործերէն մէկը կատարեց անցեալ օր Մանիլայի ծոցին վրայ , ետք նաւազներու հետ Մեյլիֆիլը ընկղմելով նեղուցին բերանը , թշնամիին ռումբերուն ու գնդակներուն տակ , որոնցմէ խուսափելն անհնար ըլլալով զնաց անձնատուր եղաւ թշնամիին :

Ժողովուրդը , յուզուած ու խելաշիտ , կուզէ որ արեւնահեղ պատերազմը շարունակուի , որպէս զի հերոսներ եւ զիւցազններ ունենայ անմահացնելու համար : Ընչուած ազգի մը ազատութեան եւ իր հայրենիքի պաշտպանութեան համար մեծնող նաւատին եւ ապրող Հըպօսընը միլիոնաւոր Ամերիկացիներուն արեւնը կը շարժեն . ժողովուրդին իսկալը կը բարձրացընեն , ու ամրոխը որոշակաւ կը տեսնէ թէ բազմամիլիոնատէր վանորդ պիտի , պանքեր Մօրկընը եւ ջնուտ պօրապի խաղաղուցը չէ որ մեծ է , երջանիկ է , անմահ է , այլ ազատութեան համար զոհուող հերոսները են մեծ ալ , երջանիկ ալ , անմահ ալ . . .

Թ. 2.

(ՄՍՏԱՆԱԿԱՆ ԹՂԹԱԿԵՒ ԵՐ)

4. Պոլիս , 15 Յունիս

Օրմանեան ամէն կենսական խնդիրներու մէջ որոշում տալէ առաջ կառավարութեան տրամադրութիւնները կանխաւ հասկընալու եւ ըստ այնմ շարժելու «թաքթիք» կը հետեւի : Օրինակները շատ են : Իզմիրիկեանի ընտրական տեղեկագիրը գեռ թառն ժողովի օրակարգին չէ

անցուցած՝ այս մասին ալ Իրան կարծիքը շոշափելու համար , եւ աւելի կենսական խնդիր նկատելով Գորակէօզեան կտակը . այդ կերպով ժամանակ չահիլ կուզէ , թէ եւ միջոցներ ձեռք առնուած են անոր քահանայքներուն շնորհակալութեամբ համար :

Կառավարին ազգի բնն ստացած մէկ տեղեկութեան յենելով , վերապահութեամբ կը հազորգեմ թէ ճատեան բաշա Գորակէօզեաններու կողմը կը բռնէ , այս վերջիններուն փաշաէն ունեցած դրամական մէկ կարեւոր պահանջքին հրամարկնուն համար . ձեր դատանանքը շատ մեծ է փաշային վրայ . եւ նոյնքան լուստեսնած : Ուշագրտութիւն կընէի՞ք թէ ամէն անգամ որ ազգին իրաւանց վերաբերեալ կենսական խնդիր մը վարչութեան սեղանին վրայ է , հոն ներկայ է նաեւ վսեմ Ատեհապետը . . . Են էր որ դարձաւ Իզմիրիկեանի հրամարկները նպատակեց եւ ան էր որ տարի մը առաջ աքսորէն ազատելու խոտուածով հրաւէր կարգաց նախորդ Պատրիարքին «մեղայագրի» նման խնդրագիր մը ներկայացնել Սուլթանին : Փաշան չէր մտաբերած թէ իր գիմացը երկաթէ եկեղեցական մը կայ որ ատանկ ծուղակի մէջ չիյնար եւ նախամեծար կը սեպէ չընդունիլ կառավարութեան կողմէ նշանակուած ամսականը : Եւ յետոյ , միթէ ճատեան չէ՞ր կարող Սիւսի խնդիրը կարգադրել ազգին բաղձանքին համեմատ , կամ գէթ՝ առանց սահմանադրապէս ահազին սխալ մը գործել ստալու վարչութեան :

Մինչ Կառավարութիւնը «Սիւսը Սեպիլներուն» դատանանքը կը տածէ , միւս Կողմէն զարմանալի լուր մը կը հասնի մեզի . այն է թէ Ատանաի կառավարիչը տեղացիներուն պատրաստել տուած է ընտրելիներու հնգանուն ցանկ մը , որուն մէջ կերեւան Օրմանեան , Աշըքեան , Բարթուղիմէոս , Մեօրոպ Սուքիտեան եւ Գրիգորիս Օհաննէսեան եպիսկոպոսներուն անունները : Իսկ Ֆրոնզիլի իկողոս Լպիսկոպոսը չըջարեականներ կուզէ թեմէրուն , հրաւիրելով ժողովուրդը ճանչնալ Գաղանձեանը իրբեւ կաթողիկոս , եւ այս վախիտ գիտութեամբը :

Աս պարագան ծանօթ է պատրիարքարանի որ Գաղանձեանի գէմ չըջարեականներ կը հրատարակէ զորս չի համարձակիր Պատրիարքարանի պատերէն զորս հանել . իսկ միւս կողմանէ մեր ճիշդութեամբ պատրիարքը շնորհաւորութիւններ կը զրկէ Թապսեան եպիսկոպոսին : Ճշմարիտ լարիւրինդս մը այս ամէնքը :

Կաթողիկոսը հեռագրով ազգարարած է պատրիարքին ճամբայ չհանել եպիսկոպոսացու վարդապետները , եւ յետագայով է

այդ խնդիրը անպայման կերպով , ինչ որ հաճոյալի լուր մըն է , իրաց տեսալ Գորակեանի մասին , որ իրապէս արժանի է եկեղեցական այդ բարձր աստիճանին : — Կառավարութիւնը Զէյթունի զօրանոցը կամրացնէ :

Բարից , 14 Յունիս

Գրած եմ արդէն թէ Պ. Քէլէկեան մասնաւոր պաշտօնով Բարիզ եկած է : Առնուած մասնաւոր նամակներ կընեն թէ Քէլէկեան պաշտօն ունի միայն Տիար Միւնաս Ձերաղը կաշառել , իբր չափաւոր յեղափոխական որ միայն ճիշդ յօգուածի «բամադրութիւնը կը պահանջէ , իբր թէ ուրիշներ թաղաւորութիւն պահանջէին , իրեն պիտի խոստացուի բարձր պաշտօն եւ առատ ամսական :

Քէլէկեան տակաւին չէ համարձակած իր պաշտօնին ձեռնարկութեան սկսիլ , դիտարկով անշուշտ որ Տ. Ձերաղի եւ Մուրատ պէյի միջեւ վիճ մը կայ :

Պիւլպիլեան այսանգամ յաջողած է ամսականներ յատկացնել (2—300 ֆրանք) անանկ խեղճուկրակ անձերու որոնք իրենց շուքէն կը վախնան եւ Բարիզի մէջ պիտակ կը ծախեն եւ որոնց ուղերձ մը ստորագրել տուած է :

Ժամանակէ մը ի վեր Պ. Արփիարեան եւս հոս կը գտնուի : Մէկ քանի վարնոց դասալիք հնչակեաններ արդէն միացած են Պիւլպիլեանի եւ առատապէս կը վարձատրուին :

Յ. Տ.

ՇՈՒՍԼՈՒԻ ՔԱՅԱՆԱՆ

—(—)

Մեզ գրուածին նայելով , աս կրօնաւորը , հակառակ լրագրական յորդորներու , գեռ կը շարունակէ իր անվայլում ընթացքը , որ դալթակութեան անփշրելի քար մըն է միշտ տեղոյն հայ ժողովրդեան համար : Ազգային ու եկեղեցական զօրծերու կամայական ու սանձարձակ հանգամանքը որ կը պիտի Պուլպիլեայի հայ դաղութիւն մէջ , միշտ առիթ պիտի տայ ասանկ ցաւալի երեւոյթներու , որոնց առաջըր առնելու ու է լուրջ ձեռնարկ չըլլար ու չէ եղած մինչեւ ցարդ : Յորջափ շարունակէ աս վիճակ , յիշեալ քահանան , օրինակի համար , պիտի յարատեւէ արհամարհելու առաթուր ընել կրօնականի անհրաժեշտ առաքինութիւնները , եկեղեցին պիտի նկատէ սրճարան մը , ուր հայհոյանք ու նախատինք պիտի թափէ աջ ու ահեակ , վիրաւորելով ժողովուրդին զգացումներուն բարեպաշտութիւնն ու եր-

կիւղածութիւնը , դուրսը , արարատ աշխարհքի առջեւ եկեղեցականի բոլորովին անպատշաճ նիստուկացեր պիտի ունենայ տարօրինապէս ազարտելով հայ կրօնականութեան համաւեալ պարկեշտութիւնն ու պարտաճանաչութիւնը :

Սապէս կը գրեն .

«Մեր այրեր աս քահանային ընթացքին չհանդուրժելով , նախամեծար կը համարեն եկեղեցի չերթալ , ուր միայն կիներ կը յաճախեն այլ եւս . կը վախնամ որ եթէ այսպէս շարունակէ , կիներն ալ պիտի դադրին երթալէ այդ սրբավայրը , որ դատարկութեան պիտի մասնուի : Կիմանամ թէ մէկ երկու երկտասարդներ մտադրեր են եկեղեցիին մէջ պոռալ գոռալ եթէ աս քահանան նորէն յիմարական բաներ ըսէ ժողովրդին » :

Բողոքարկուն կառելցնէ նաեւ թէ անբաշարձ ասկից առաջ «Շարժումի» մէջ իր մասին գրուածներէն կատարած , հասած տեղը անոր գէմ անպատշաճ լեզու մը կը գործածէ : Մենք կը կարծենք որ ասէր հայրը այնքան տկարամիտ ըլլալու չէ որ հաւատայ թէ մեզ գէմ ու է հայհուջ հիւլէի մը չափ կարեւորութիւն ունի մեզ համար : Ուստի աս մասին աւելորդ ձանձրութիւն է իր ըրածը : Մենք դարձեալ կը յորդորենք զինքը որ վարմանքը շիտակէ : Մեզք է մեր եկեղեցիին ու կրօնքին անարատ պատուին , որ շատ անգամ անարժաններու ափին մէջ անցած է այսպէս :

Յետոյ կը զարմանանք որ Շուսլուի թաղ խորհուրդը գտնէ պատրիարքարան դրելու չափ նախաձեռնութիւն մը չունենար : Արդեօք կը վախնայ քահանայէն :

ՔՐՈՆԻԿ

—(—)

Սալմաստէ հասած լուրերը դարձեալ յուզուած կը ցուցնեն նոյն կողմերու կացութիւնը : Հարզան գետը , Փայաշուկի եւ Ղալաւարի մէջ տեղ փոսած դիակ մը նետած ըլլալով , պարսիկ ամբոխը , քախցած պաշտօնեաները եւ մոլեռանդ սէյիտները միացած՝ սահազին աղմուկ մը բարձրացուցեր են ըսելով թէ հայերը միւսլիմանը սպաներ եւ շուրը նետեր են , եւ կը պահանջեն անոր կեանքը , հակառակ պարագային սպառնալով կոտորել ըտլոր քրիստոնեայ ժողովուրդը : Բարեբախտաբար վերջին քանի մը նշաններ խնդիրը պարզեր են եւ հասկցուեր է թէ դիակը իսլամի չէ :

Ուստական լրագրերը վերջովի տեղեկութիւններ կը հազորգեն նոր-նախիջեանի մէջ

տեղի ունեցած ահուկի կողմ-
պատի մը — հարկը հազար
բուլլի — որուն զոհ գացեր է
հայ աղքատներու խնամասար
եկեղեցական հոգաբարձութիւնը :

Նշանաւոր հայ դաշնակա-
հար Տ. Վ. Սվաճեան վերջերս
Բարիդ, «Սալ էռաուի» մէջ նուա-
զահանդէս մը տուեր է որ ճըշ-
մարիտ յաղթանակ մը եղեր է
հայ արուեստագէտին համար :

Պարսկական սահմանադրի
թրքահայտակ քերտերը շատ
կը զբաղեցնեն պարսիկ կառա-
վարութիւնը : Վերջերս կանո-
նաւոր կուս մը տեղի ունեցեր է
քերտերու և վաշտ մը պարսիկ
զօրքերու մէջտեղ որոնք երկու
թնդանօթ ունին եղեր : Քիւր-
տերը յաղթող եղեր են 35ի չափ
զօրքեր սպաննելով : Նորանոր
արիւնդուշտ կուսներու կը սպա-
տուի :

«Մոսկովսկա Վետոմստ»
լրագիրը կը հազարդէ թէ կով-
կասի կառավարչապետին լիազօ-
րութիւն պիտի տրուի արգիլե-
լու օտարահպատակներու անշարժ
կալուածներ ձեռք բերել կով-
կասի և Անդրկովկասի մէջ : Սո-
կից վերջը, ամէն օտարահպա-
տակ պարտաւոր պիտի ըլլայ կա-
լուած մը գնելու համար թոյլ-
տուութիւն ստանալ :

Հրեայ բարերար Պ. Հիւրշի
հոգածութիւնով Պրաղիլիա հաս-
տատուած հրեաները սկսած են
կամայ կամայ Ռուսիա վերա-
դառնալ, չկրնալով ընտելանալ
այդ միջավայրին . . . հաւանա-
կանարար տրամար ուսու զեղացի-
ներու բացակայութեան պատճա-
ռով :

—Ամերիկայի Եւրոպային մէջ՝
հալի կղզիներու միացման վի-
ճարանութեան ատեն, ռամկա-
վարական Պ. Քլէյ կընդդիմանայ
և կը յայտարարէ թէ Ամերիկա
ընաւ պատճառ չունի Փիլիպպ-
եանները գրաւելու, քանի որ
պատերազմը ատանկ նպատակով
մը չս'աւա :

—Բոու-Սալիսի Ամերիկեան հիւ-
պատոսին խնդրանք, Եգիպտա-
կան կառավարութիւնը թոյլ չպի-
տի տայ սպաննելու Բամարա ծո-
վակալի նաւատորմի շարժու-
ածները ցնոր տնօրինութիւն :

—Սան Պրանչիսկօի մէջ Փի-
լիպպեաններն ուղեւորող բրորդ
արշաւախմբին չորս հազար զօր-
քերը չորս փոխադրանաւ մտեր
ու ճամբայ ելեր են :

—Յունիս 11 թուականով Մա-
նիլաէ կը հեռագրեն «Ռէօյթըր»
թէ կայութիւնը միշտ նոյնն է :
Ապտամբները բնաւ յառաջի-
մութիւն չեն ըրած և սպաննա-
ցիք կը շարունակեն իրենց ամ-
բուրեանց շինութիւնը :

—Ուաշինկթընի ծովային պաշ-
տօնարանը կը ծանուցանէ թէ
Քոնտոնը Վաթալըն, որ իր գրօշը
պարգած է «նիւարքի» վրայ,
ծովակալ Սամուելի պիտի միա-
նայ և պիտի առնէ հրամանա-
տարութիւնը նաւատորմին որ
անմիջապէս ճամբայ պիտի ել-
լայ դէպ Սպանիա :

—Ամերիկացիները կը շարունակեն
զօրք եւ սպաննելու հանել Գու-
պի եզերքը : Այս պատճառով ար-
իւնալի ընդհարումներ տեղի կունե-
նան : Յունիս 25 ին Սանթիակոէ
հինգ մղոն հեռաւորութեամբ 2,000
սպաննիցիք 1,000 ամերիկացիներու
վրայ յարձակեցան մացառոտ վայրի
մը մէջ : Սպաննիցիք թէև շատուոր
եւ ընտիր զիրքի մէջ, ետ քաշուե-
ցան մինչեւ քաղաք : Կուր ժամ մը
տեւած է : Ամերիկացիք յետոյ բերդ
մըն ալ զրաւեցին ուր սպաննիցիք
վերջին դիմադրութիւն մը ընել կը
փորձէին : Սպաննիցիք բլուրներէ
անդին անցնելու ստիպուեցան : Ամե-
րիկեան հեծելազուրը օգնութիւն
ներ ստացած ըլլալով, այս պահուս
դիրք բռնած է նոյն իսկ Սանթիա-
կօի գուռներուն առջեւ : Ուրիշ զօ-
րազուրդեր կը պատրաստուին ասոնց
միտնալ : Վերջնական յարձակման մը
կը սպասուի :

ԲԱՂԱԲԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

Պ Ա Տ Ե Ր Ա Ձ Մ Ը

Թէև ծանուցուեցաւ թէ Մա-
նիլա վերջապէս անձնատուր է
եղած, զէն այս լուր չհաստատ-
ուեցաւ : Գործերու ընթացքը
ակներեւ ցոյց կուտայ սակայն
թէ մօտ է Մանիլայի անկումը :
Զօրավար Տուրի աւելի հանդիսա-
տեսի դեր կը կատարէ՝ թողլով
որ սովն ու ապստամբները յան-
վերջին հարուածը Փիլիպպեան-
ներու :

Անթիլեաններու մէջ աւելի
վարդագոյն չէ սպաննիցից կա-
ցութիւնը . արշաւախմբեր հե-
տըզհետէ ճամբայ կելլան Սան-
Պրանչիսկօէ դէպ ի Գուպա : Ա-
մերիկա կը պատրաստուի ուժա-
կոծել Սպանիայի ամբողջը : Ու-
ղեւ քասթիլիան ամբարաւա-
նութիւնը չը յօժարիր զիջում ը-
նել, պարտութիւն խստովանե-
լով : Կործանուելու մօտ ազգերը
միշտ ատանկ յամառութիւններ
ունեցած են :

Խաղաղութեան մասին շրջած
զրոյցները անհիմն են : Սպանիա
կուղէ որ հաշտութիւնը ուղղակի
Մ. Նահանգաց հետ կնքէ, ա-
ռանց միջնորդութեան Եւրոպա-
կան սէրութեանց որոնք առի-
թէն օգտուելով հոգային վոխա-
րիւնութիւններ պիտի ուղեն :

—Պարսկական զեպանը դարձ-
եալ նօթա մը տուած է Գրան
պնդելով իր կանխագոյն պա-
հանջումին վրայ, որ է Պոլսոյ
և գաւառներու հայկական շար-
քերու ատեն փաստաւած ֆրան-
սական հպատակներուն գրամա-
կան հատուցում ընել :

—Ֆրանսիան իշխանը յուլիսի
մէջ պիտի այցելէ Ռուսիայի
թագաւորին Սինաիա դղեակը :

ԳՈՐԻԱԿԱՍԱՐ ԵՒ ՅԱՆՁՆԱԿԱՍԱՐ
Գիրք ամէն լեզուէ, թուղթ, մե-
լան եւ ամէն կարգի դասական ա-
ռարկաներ, ուզողաց կը զրկեմ փու-
թով : Հայ եւ այլ լեզուաւ թեր-
թերու բաժանորդ գրուել ուզողաց
զիւրութիւններ : Քէօթիէնճէյն եւ
այլ տեղերէ, Ամերիկա եւ այլ ու-
րեք գնալ փափագողաց խորհուրդ
զիւրութիւն եւ ծանօթութիւններ :
Հասցէ
Paul Gigerian, strada mangalia No. 141
Constanta (Roumanie)

Պ Օ Ր Ս Ա
Վառնա 19 Յունիս
ՊՈՒՂՏԱՅ
Վակօն եօգ, լիպրա 47—51, հէքթօլ
9.50—10 ֆրանք
Արապա, լիպրա 47—55 հէքթօլ
8—8.50 ֆրանք

ԱՐԲԱ
Լիպրա 38—40 հէքթօլ 4.80—5.20
ֆրանք
ՄՐՍՐԲ
Վակօն եօգ, լիպրա 57—58 հէքթօլ
7—7.50 ֆրանք
Արապա, լիպրա 57—60 հէքթօլ
7.80—8 ֆրանք
ՅԱՍՈՒԼԵՍ
100 օպգասը 15—20 ֆրանք՝ մայա
կէօթէ
Առապա մուամէլէսի՝ Նարբոլտոն 21
ֆրանք հիսապը իլէ տիր .
Կիւնտէ 5—6 արապա պուզտայ,
4—5 արապա արբա, կէլմէքսէ
տիր :

ՃԱՇԱՐԱՆ ԵՒ ԶԲՈՍԱՐԱՆ
ՀԱՃԻ ԲԱՆԱԿՕՒՄԻ ՃԻՇԻ ԴԵՄԸ
Կը բանեցուցէ Պ. Տիգրան Թիփիկի-
նեան եւ ընկեր
Արեւստին մէջ կատարելութեան հա-
սած երկասարգ հայու մը ձեռամբ
սարքուած այս հովատուն, մաքուր
ու զեղջական հաստատութիւն ոչ մի-
այն պատիւ կը բերէ հայ ճաշակին,
այլ եւ մեծ խթան մը կըլլայ որ հայ
ու օտար փափակակերներ իրենց գար-
նանային և ամառնային ժամադրա-
վայր մը ընեն զայն զբօսնելու եւ
ճաշելու, Պոնտոսեան ակտիօնայի
հովիտուն ու Սեւ ծովի կապոյտ տա-
րածութեան առջեւ :
Հակառակ այս հրապուրիչ առաւե-
րութիւններուն, յաճախորդները պի-
տի գտնեն յոյժ զիւրամտացի զի-
ներ թէ ըմպելիքի թէ կերակուրնե-
րու մասին : 13

ԴԵՍ ՈՒ ԴԵՆ

Իզմիրէն մեզ կը գրեն տեղ-
ւոյն որբանոցին վարիչ Ֆէրքիւնի
անուն միտինարին հրէշային
ընթացքը իր խնամքին յանձ-
նուած որբերուն հանդէպ : Որ-
բուհիներ իր վայրենի կրքին

«Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ»
Վառնա մէջ կը վաճառուի Մու-
սալլա, թահմիկ կէղիպէօյի քե-
նի խանութը, եւ Ապտիւրրահման
մզկիթին գէմը հայկական գրատու-
նը, Ա. Զարբանէլեանի քով :
Печатница «Взаимность», Варна.